

ք. Երևան

05 03 2018թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար Գ. Ալոյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Միկրոթինգ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ռ. Մալխասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը, այսուհետ՝ «Պայմանագիր» հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսակնու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 7 620 000 /յոթ միլիոն վեց հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարզևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ 2 286 000 /երկու միլիոն երկու հարյուր ութսունվեց հազար/ ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 2 տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում է էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը,

1 Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

2 Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համարեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
h/h 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մայր-Նովա 33/63
բանկ «Բնեկորբանկ» ՓԲԸ
h/h 2050022150151001
ՀՎՀՀ 00824922
Էլ. հասցեն՝ microring@arminco.com

Գ. Ալոյան

Ռ. Մալխասյան

(ստորագրությունը)
Կ.Տ.

(ստորագրությունը)
Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՄԱՌՑՄԱՆ ԲԼՈՒՆԵՐԻ
ՏԵՆԻԲԱԿԱՆ ԸՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ

22 դրամ, ներ. ԱԱՀ

Հրավերի նախատեսված չափաքանակի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրերը և գՄԱ (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագրերը*	չափանման միավորը	միավոր գինը/շշ դրամ	Ընդհանուր գինը /շշ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	Էներգիա քանակը	Ժամկետը
1	31151120	Մնուցման բրդի ECOM60US05 XP Power	XP Power PLC Չինաստան	Հավելված 6.1.1	հատ	22200	1110000	50	50	50	Պայմանագրի հաստատման օրվանից 7 /յոթ/ամիս
2	31151120	Մնուցման բրդի EMH350PS48D-01 XP Power	XP Power PLC Չինաստան	Հավելված 6.1.2	հատ	105300	5265000	50	50	50	
3	31151120	Մնուցման բրդի SHP650PS48 XP Power	XP Power PLC Չինաստան	Հավելված 6.1.3	հատ	124500	1245000	10	10	10	

* Հավելվածներ 6.1.1, 6.1.2, 6.1.3 կազմում են սույն Հավելված N1-ի բարեկարգիչն ընտրող Ապրանքը պետք է ունենա որակի սերտիֆիկատ:

ԳՆՈՂ

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Խ/Խ 157/0027609970100
ՀՎՀՀ 01501898


(ստորագրությունը)
Գ. Ալոյան
Կ.Տ.



ՎԱՃԱՍՈՂ

Խապե՛ ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նոկա 33/63
բանկ՝ «Ինտերբանկ» ՓԲԸ
Խ/Խ՝ 2050022150151001
ՀՎՀՀ՝ 00824922

Լ. Խապե՛ microfin@arminco.am
Կ.Տ.



Հավաքաժին 1

- | | |
|----------------------------|---|
| 1. Ապրանքի անվանումը՝ | Սնուցման բլոկ |
| 2. Մոդելը՝ | ECM60US05 |
| 3. Բանակը՝ | 50 հատ |
| 4. Մատակարարման ժամկետը՝ | 7 (յոթ) ամիս՝ Պայմանագիրը հաստատելու օրվանից հաշված |
| 5. Տեխնիկական բնութագրերը՝ | ըստ ստորև բերված աղյուսակի |
| 6. Երաշխիք՝ | 2 (երկու) տարի՝ Ապրանքի մատակարարման օրվանից հաշված |

Պարամետրի անվանումը	Specification	Համառոտ նկարագրությունը
ՄՈՒՏԸ		
INPUT		
Մուտքային լարում	Input Voltage	90-264 VAC
Մուտքային հաճախականություն	Input Frequency	47-63 Hz
Մուտքային հոսանք	Input Current	0,6A max at 230 VAC
Մեկնարկի հոսանք	Inrush Current	40 A max at 230 VAC
Հողանցման արտահոսքի հոսանք	Earth Leakage Current	< 210 mA at 230 VAC/50 Hz
Հզորության գործակից	Power Factor	EN61000-3-2
Մուտքի պաշտպանվածություն	Input Protection	Internal T3, 15 A, 250 V fuse in line and neutral
ԵԼԸ		
OUTPUT		
Ելքային լարում	Output Voltage	5,0 V
Ելքային լարման կարգավորում	Output Voltage Trim	± 5 %
Նախնական կարգավորում	Initial Set Accuracy	± 1,0 % V1, ± 5 % V2, V3 & V4
Նվազագույն բեռ	Minimum Load	No minimum load required
Մեկնարկի հապաղումը	Start Up Delay	1,5 s max
Մեկնարկի աճի ժամանակը	Start Up Rise Time	10 ms max
Սպասման ժամանակը	Hold Up Time	16/75 ms min at 115/230 VAC
Շեղում	Drift	-
Գծային կարգավորում	Line Regulation	± 0,5 %
Բեռի կարգավորում	Load Regulation	± 1 %
Խաչածն կարգավորում	Cross Regulation	2%
Անցումային բնութագիր	Transient Response	4% max. deviation, recovery to within 1% in 500µs for a 25% load change
Թարթում և աղմուկ	Ripple & Noise	1 % pk-pk, 20 MHz bandwidth
Պաշտպանություն գերլարումներից	Overvoltage Protection	115-135 % Vnom, recycle input to reset
Պաշտպանություն տաքացումից	Overtemperature Protection	-
Պաշտպանություն գերբեռնվածությունից	Overload Protection	110-150 % on primary power limit, auto recovery
Պաշտպանություն կարճ միացումից	Short Circuit Protection	Trip and restart
Ջերմաստիճանային գործակից	Temperature Coefficient	0,05%/°C
Առավելագույն բեռնվածություն	Peak Load	120% for 100 ms A 120% peak load can be taken for up to 100 ms with a 25% duty cycle. Average load not to exceed 40 W.
ՀԻՍՆԱԿԱՆ		
GENERAL		
Օգտակար գործողության գործակից	Efficiency	80-85% depending on model
Անջատման հաճախականություն	Switching Frequency	70 kHz typical
Հզորության խտություն	Power Density	6,3 W/in ³
Անխափան աշխատանքի միջին ժամանակ	MTBF	600 kHrs to MIL-HDBK-217F at 25°C, GB
ՇՐՋԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐ		
ENVIRONMENTAL		
Աշխատանքային ջերմաստիճան	Operating Temperature	0°C to +70°C
Սառեցում	Cooling	Convection & fan-cooled ratings
Աշխատանքային խոնավություն	Operating Humidity	95 % RH, non-condensing
Պահպանման ջերմաստիճան	Storage Temperature	- 40°C to +85°C
Ցնցում	Shock	30 g pk, half sine, 6 axes
Վիբրացիա	Vibration	2 g rms, 5 Hz to 500 Hz, 3 axes
ԷՄՅ և ԱՆՎՈՒՄԱՆՈՒԹՅՈՒՆ		
EMC & SAFETY		
Արտանետումներ	Emissions	EN60601-1-2, EN61204-3, FCC20780, EN55022 & EN55011 level B conducted EN55022 Level A radiated
Հարմոնիկ հոսանքներ	Harmonic Currents	EN61000-3-2, class A
Լարման թարթում	Voltage Flicker	EN61000-3-3
Պաշտպանվածություն ճառագայթումից	Radiated Immunity	EN61000-4-3, 10 V/m Perf Criteria A
Թարթում	Surge	EN61000-4-6, level 3 Perf Criteria A, SEMI F47
Կոնդուկտիվ խանգարումակայունություն	Conducted Immunity	EN61000-4-6, 10 V Perf Criteria A
Անկումներ և ընդհատումներ	Dips & Interruptions	EN61000-4-11, 30% 10 ms, 60% 100 ms, 100% 5000 ms, Perf Criteria A, B, EN60601-1, 30% 500 ms, 60% 100 ms, 100% 10 ms, 100% 5000 ms, Perf Criteria A, A (with 50% load), A,B
Անվտանգության ստանդարտներ	Safety Approvals	EN60601-1, ANSI/AAMI ES60601, CSA22.2 No.60601-1 per cUL including Risk Management, EN60950-1, UL60950-1
Մեխանիկական տվյալներ		
Mechanical Details		

Կից ներկայացնում ենք մանրամասն տեխնիկական բնութագրերը՝ վերցված արտադրողի կայքից:

Չափաբաժին 2

- | | |
|----------------------------|---|
| 1. Ապրանքի անվանումը՝ | Սնուցման բլոկ |
| 2. Մոդելը՝ | EMH350PS48D-01 |
| 3. Բնակարգը՝ | 50 հատ |
| 4. Մատակարարման ժամկետը՝ | 7 (յոթ) ամիս՝ Պայմանագիրը հաստատելու օրվանից հաշված |
| 5. Տեխնիկական բնութագրերը՝ | ըստ ստորև բերված աղյուսակի |
| 6. Երաշխիք՝ | 2 (երկու) տարի՝ Ապրանքի մատակարարման օրվանից հաշված |

Պարամետրի անվանումը	Specification	Համառոտ նկարագրությունը
ՄՈՒՏՔ		
INPUT		
Մուտքային լարում	Input Voltage	80-275 VAC
Մուտքային հաճախականություն	Input Frequency	47-63 Hz
Մուտքային հոսանք	Input Current	1,8 A at 230 VAC
Մեկնարկի հոսանք	Inrush Current	40 A max at 230 VAC, cold start 25°C
Հողանցման արտահոսքի հոսանք	Earth Leakage Current	250 mA max 264 VAC/60Hz
Հզորության գործակից	Power Factor	> 0,9
Մուտքի պաշտպանվածություն	Input Protection	10 AF/250V Internal fuse in line and neutral
ԵԼՔ		
OUTPUT		
Ելքային լարում	Output Voltage	48 V
Ելքային լարման կարգավորում	Output Voltage Trim	± 10 % V1
Նախնական կարգավորում	Initial Set Accuracy	± 1,0 % V1, ± 5 % V2
Նվազագույն բեռ	Minimum Load	No minimum load required
Մեկնարկի հապաղումը	Start Up Delay	1 s typical
Մեկնարկի աճի ժամանակը	Start Up Rise Time	50 ms
Սպասման ժամանակը	Hold Up Time	16 ms typical
Շեղում	Drift	-
Գծային կարգավորում	Line Regulation	± 0,5 % maximum
Բեռի կարգավորում	Load Regulation	± 1 % V1, ± 5 % standby
Խաչաձև կարգավորում	Cross Regulation	Dual output only
Անցումային բնութագիր	Transient Response	4% max. deviation, recovery to within 1% in 500µs for a 50-75-50% load change
Թարթում և աղմուկ	Ripple & Noise	1 % pk-pk, 20 MHz bandwidth
Պաշտպանություն գերլարումներից	Overvoltage Protection	115-140 % V1 nom, recycle input to reset
Պաշտպանություն տաքացումից	Overtemperature Protection	Auto reset
Պաշտպանություն գերբեռնվածությունից	Overload Protection	110-150 %, power limit
Պաշտպանություն կարճ միացումից	Short Circuit Protection	Continuous, approximately constant current
Ջերմաստիճանային գործակից	Temperature Coefficient	0,05%/°C
Առավելագույն բեռնվածություն	Peak Load	-
ՀԻՄՆԱԿԱՆ		
GENERAL		
Օգտակար գործողության գործակից	Efficiency	87% typical
Անջատման հաճախականություն	Switching Frequency	62-560/71/50-130 KHz, PFC/Main/Standby Converter
Հզորության խտություն	Power Density	16,3 W/In ³
Անխափան աշխատանքի միջին ժամանակ	MTBF	400 kWhrs to MIL-HDBK-217F at 25°C, GB
ՇՐՋԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՑՐ		
ENVIRONMENTAL		
Աշխատանքային ջերմաստիճան	Operating Temperature	0°C to +70°C
Սառեցում	Cooling	Forced cooled 12 CFM or integral fan
Աշխատանքային խոնավություն	Operating Humidity	95 % RH, non-condensing
Պահպանման ջերմաստիճան	Storage Temperature	- 40°C to +85°C
Ցնցում	Shock	±3 x 30g shocks in each plane, total 18 shocks. 30g = 11 ms (±0.5 ms), half sine, conforms to EN60068-2-27 & EN60068-2-47
Վիբրացիա	Vibration	Single axis 10 - 500 Hz at 2g sweep and endurance at resonance in all 3 planes. Conforms to EN60068-2-6
ԷՄՐ և Անվտանգություն		
EMC & SAFETY		
Արտանետումներ	Emissions	EN55011/22 level B conducted EN55011/22 level A radiated
Հարմոնիկ հոսանքներ	Harmonic Currents	EN61000-3-2, class A
Լարման թարթում	Voltage Flicker	EN61000-3-3
Պաշտպանվածություն ճառագայթումից	Radiated Immunity	EN61000-4-3, level 3 Perf Criteria A
Թարթում	Surge	EN61000-4-5, installation class 3, Perf Criteria A
Կոնդուկտիվ խանգարումակայունություն	Conducted Immunity	EN61000-4-6, level 3 Perf Criteria A
Անկումներ և ընդհատումներ	Dips & Interruptions	EN61000-4-11, 30% 10 ms, 60% 100 ms, 100% 5000 ms, Perf Criteria A, B, B, EN60601-1-2, 30% 500 ms, 60% 100 ms, 100% 10 ms, 100% 5000 ms, Perf Criteria A, A, A, B - 230 VAC. Consult longform datasheet for 115 V operation.
Անվտանգության ստանդարտներ	Safety Approvals	EN60601-1, ANSI/AAMI ES60601-1, CSA22.2 No.60601-1 per cUL BF Rated, Including Risk Management, EN60950, UL60950
Մեխանիկական տվյալներ		
Mechanical Details		

Կից ներկայացնում ենք մանրամասն տեխնիկական բնութագրերը՝ վերցված արտադրողի կայքից:

Չափաբաժին 3

- | | |
|----------------------------|---|
| 1. Ապրանքի անվանումը՝ | Սնուցման բլոկ |
| 2. Մոդելը՝ | SHP650PS48 |
| 3. Բանակը՝ | 10 հատ |
| 4. Մատակարարման ժամկետը՝ | 7 (յոթ) ամիս՝ Պայմանագիրը հաստատելու օրվանից հաշված |
| 5. Տեխնիկական բնութագրերը՝ | ըստ ստորև բերված աղյուսակի |
| 6. Երաշխիք՝ | 2 (երկու) տարի՝ Ապրանքի մատակարարման օրվանից հաշված |

Պարամետրի անվանումը	Specification	Համառոտ նկարագրությունը
ՄՈՒՏԵ INPUT		
Մուտքային լարում	Input Voltage	80-264 VAC
Մուտքային հաճախականություն	Input Frequency	47-63 Hz
Մուտքային հոսանք	Input Current	3,2 A at 230 VAC
Մեկնարկի հոսանք	Inrush Current	40 A max at 264 VAC
Հողանցման արտահոսքի հոսանք	Earth Leakage Current	0,5mA max 264 VAC/60Hz
Հզորության գործակից	Power Factor	> 0,9
Մուտքի պաշտպանվածություն	Input Protection	T 16 A/250 V, Internal fuse in line and neutral
ԵԼԲ OUTPUT		
Ելքային լարում	Output Voltage	48 V
Ելքային լարման կարգավորում	Output Voltage Trim	± 10 % V1
Նախնական կարգավորում	Initial Set Accuracy	± 1,0 % V1, ± 5 % V3
Նվազագույն բեռ	Minimum Load	No minimum load required
Մեկնարկի հապաղումը	Start Up Delay	500 ms max
Մեկնարկի աճի ժամանակը	Start Up Rise Time	50 ms
Սպասման ժամանակը	Hold Up Time	20 ms minimum
Շեղում	Drift	± 0,2 % after 20 min warm up
Գծային կարգավորում	Line Regulation	± 0,5 %
Բեռի կարգավորում	Load Regulation	± 1 % V1, ± 5 % V3
Խաչաձև կարգավորում	Cross Regulation	-
Անցումային բնութագիր	Transient Response	4% max. deviation, recovery to within 1% in 500µs for a 50-75-50% load change
Թարթում և աղմուկ	Ripple & Noise	1 % pk-pk, 20 MHz bandwidth
Պաշտպանություն գերլարումներից	Overvoltage Protection	115-145 % Vnom, recycle input to reset
Պաշտպանություն տաքացումից	Overtemperature Protection	Auto reset
Պաշտպանություն գերբեռնվածությունից	Overload Protection	110-140 %, V1 only
Պաշտպանություն կարճ միացումից	Short Circuit Protection	Constant current characteristic
Ջերմաստիճանային գործակից	Temperature Coefficient	0,05%/°C
Առավելագույն բեռնվածություն	Peak Load	-
ՀԻՄՆԱԿԱՆ GENERAL		
Օգտակար գործողության գործակից	Efficiency	85% typical
Անջատման հաճախականություն	Switching Frequency	PFC 70kHz, main converter 200kHz, standby 130 kHz
Հզորության խտություն	Power Density	8,2 W/in ³
Ամխափան աշխատանքի միջին ժամանակ	MTBF	216-275 kHrs to MIL-HDBK-217F at 25°C, GB
ՇՐՋԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՆՅՐ ENVIRONMENTAL		
Աշխատանքային ջերմաստիճան	Operating Temperature	-20°C to +70°C
Սառեցում	Cooling	-
Աշխատանքային խոնավություն	Operating Humidity	95% RH, non-condensing
Պահպանման ջերմաստիճան	Storage Temperature	-40 °C to +85 °C
Ցնցում	Shock	30 g pk, half sine, 6 axes EN60068-2-27, -2-47
Վիբրացիա	Vibration	2 g rms, 5-500 kHz, 3 axes EN60068-2-6
ԷՄՐ և Անվտանգություն EMC & SAFETY		
Արտանետումներ	Emissions	EN55022 class B conducted EN5522 class A radiated
Հարմոնիկ հոսանքներ	Harmonic Currents	EN61000-3-2, class A, 650 W: class C for loads ≥ 20%
Լարման թարթում	Voltage Flicker	EN61000-3-3
Պաշտպանվածություն ճառագայթումից	Radiated Immunity	EN61000-4-3, level 3 Perf Criteria A
Թարթում	Surge	EN61000-4-5, installation class 3, Perf Criteria A
Կոնդուկտիվ խանգարումակայունություն	Conducted Immunity	EN61000-4-6, level 3, Perf Criteria A
Անկումներ և ընդհատումներ	Dips & Interruptions	EN61000-4-11, 30% 10 ms, 60% 100 ms, 100% 5000 ms, Perf Criteria A, B, B
Անվտանգության ստանդարտներ	Safety Approvals	IEC60950-1 CB report, CSA22.2 No.60950-1, UL60950-1, TUV, EN60950-1, SEMI F47
Մեխանիկական տվյալներ Mechanical Details		

Կից ներկայացնում ենք մանրամասն տեխնիկական բնութագրերը՝ վերցված արտադրողի կայքից:

ՎԱՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*


ՀՀ դրամ

Կրակերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Պիսաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների**							Ընդամենը						
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս		օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	31151120	Մուսցման բրդի ECOM60US05 XP Power	-	-	2 286 000	-	-	-	-	-	-	5 334 000	5 334 000	5 334 000	5 334 000	7 620 000
2	31151120	Մուսցման բրդի EMH350PS48D-01 XP Power	-	-	2 286 000	-	-	-	-	-	-	5 334 000	5 334 000	5 334 000	5 334 000	7 620 000
3	31151120	Մուսցման բրդի SHP650PS48 XP Power	-	-	2 286 000	-	-	-	-	-	-	5 334 000	5 334 000	5 334 000	5 334 000	7 620 000

* Վճարման էնթալպա գումարները ներկայացվում են աճողական կարգով:
** Իրական գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՔՆՈՐ

ՀՀ, ք. Երևան, Լորք, Հոկտեմբյան 95
«Ամերիարանկ» ՓԲԸ
Խ/Խ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898


Գ. Ալոյան
(ստորագրությունը)
Կ.Տ.



ՎԱՃԱՏՈՐ

Խապեն՝ ՀՀ, ք. Երևան, Մալաթ-Նոկա 33/63
բանկ «Ինելիորանկ» ՓԲԸ
Խ/Խ 2050022150151001
ՀՎՀՀ՝ 00824922
Էլ. Խապեն՝ microfin@arminfo.com


Վ. Միկոբյան
(ստորագրությունը)
Կ.Տ.

